ՀՀ ԳԱԱ Տեղեկագիր, Գիտություններ Երկրի մասին, 2015, 68, № 2, 95-96

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐ

ԿԱՄՈ ԱՐՇԱՎԻՐԻ ԱՂԱՄԱԼՅԱՆ
(1931-2015)



2015թ.մայիսի 3-ին, Հունաստանում, 84 տարեկան հասակում կյանքից հեռացավ ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի նախկին գիտաշխատող Կամո Արշավիրի Աղամալյանը:

Կ.Աղամալյանը ծնվել է 1937թ. Երևանում, ծառայողի ընտանիքում: Սովորել է Երևանի Չկալովի անվան միջնակարգ դպրոցում, ապա, 1947-51թթ., Երևանի Լենա-մետալուրգիական տեխնիկումում:

1951թ. գործուղվում է Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետություն՝ Ֆրայբուրգի և Վեյմարի ուրանի հանքավայրերի շրջաններում որոնողահետախուզական աշխատանքներին մասնակցելու նպատակով: Այնուհետև, 1952-53թթ. աշխատում է Ստալինգրադի հիդրոէլեկտրակայանի կառույցի Խվալինսկի որոնողական արշավախմբում:

1953-58թթ. սովորում է Երևանի պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետում:

1958-60թթ. որպես ճարտարագետ-երկրաբան նա աշխատում է ԽՍՀՄ Երկրաբանության նախարարության Գրոմովյան արշավախմբի պետրոգրաֆիայի լաբորատորիայում: 1960-61թթ. գործուղվում է Մոնղոլիա, որպես երկրաբանական վարչության ճարտարագետ-երկրաբան: Այդ տարիների աշխաքտանքների արդյունքում Կ.Աղամալյանը հայտնաբերել է խոշորոգույն էրդենետ պղինձ-մոլիբդենային հանքավայրը, որի համար պարգևատրվել է Մոնղոլիայի մեդալով: 1964-72թթ. աշխատում է Հայաստանի Երկրաբանական վարչությունում որպես երկրաֆիզիկական արշավախմբի ավագ, այնուհետև՝ գլխավոր երկրաբան: 1972-74թթ. աշխատում է Սոմալիում՝ որպես ուրանի հանքավայրերի ուսումնասիրման և գնահատման ՄԱԿ-ի փորձագետ, իսկ 1974-81թթ. եղել է ՀՀ Երկրաբանական վարչության կանխատեսումային-մետաղածնական արշավախմբի գլխավոր երկրաբանը:

1981 թվականից Կ.Աղամալյանը անցնում է աշխատանքի ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտում՝ առաջատար ճարտարագետի, ավագ գիտաշխատողի, ապա՝ նավթի երկրաբանության լաբորատորիայի վարիչի պաշտոններում, ղեկավարելով նավթի և գազի որոնողահետախուզական աշխատանքները:

Իր բազմամյա և արգասավոր գիտա-արտադրական գործունեության ընթացքում Կ.Աղամալյանը հեղինակել է 16 գիտաարտադրական ձեռագիր հաշվետվություններ, այդ թվում՝ անգլերեն լեզվով, որոնք բոլորը ներդրված են արտադրության մեջ, ինչպես նաև 3 եզրակացություններ և տպագրված հոդվածներ: Նրա անմիջական ղեկավարությամբ, Մոսկվայի ՑՆԻԳՐԻ

աշխատակիցների հետ համատեղ, կազմվել են Հյուսիսային Հայաստանի Ստեփանավանի և Շամշադինի հանքային շրջանների 1:50000 մասշտաբի կանխատեսային-մետաղածնական քարտեզներ:

ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտում աշխատած տարիներին Կ.Աղամալյանը զբաղվել է նաև Հայաստանի տարածքի երկրակեղևի խորքային կառուցվածքի ուսումնասիրման, երկրաշարժերի կանխատեսման հիմնահարցերով: Նա կազմել է Հայկական ԱԷԿ-ի շրջակայքի խզումների 1:200000 մասշտաբի քարտեզը, մասնակցել է "Կովկասի և Միջին Արևելքի տիեզերատեկտոնական քարտեզի" կազմման աշխատանքներին: Ղեկավարել է Ղրիմի և Խարկովի ատոմային էլետրակայանների կառուցման տեղանքների խորքային կառուցվածքին և սեյսմոտեկտոնիկային առնչվող մի շարք պայմանագրային աշխատանքներ:

1992թ., ընտանեկան պայմաններից ելնելով, Կ.Աղամալյանը բնակության տեղափոխվեց Հունաստան:

Կ.Աղամալյանը աչքի էր ընկնում ընկերների և աշխատակիցների հանդեպ իր շատ բարյացկամ վերաբերմունքով, վայելում էր շրջապատի համակրանքը, հարգանքը և ուներ մեծ հեղինակություն երկրատեկտոնիկայի, երկրաֆիզիկայի, երկրակեղևի խորքային կառուցվածքի և հանքառաջացման ասպարեզների մասնագետների շրջանում:

Սիրելի Կամոյի՝, տարբեր երկրաբանական ոլորտների փորձառու մասնագետի, անփոխարինելի հոր ու պապիկի, եղբոր և ընկերոջ անմար հիշատակը վառ կմնա նրա բարեկամների, ընկերների և աշխատակիցների սրտերում:

Մի խումբ ընկերներ
ՀՀ ԳԱԱ "Գիտություններ Երկրի մասին" տեղեկագրի խմբագրություն